Աշոտ Կարապետյան
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ-Ի ԵՎ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Հայ-իտալական երկկողմ հարաբերությունների հաստատումը և զարգացումը ունեն հազարամյակների պատմություն: Այն հիշարժան է բարի ավանդույթներով և փոխադարձ բարեկամության դրսևորումներով, ինչը ամուր հիմք է ստեղծում հարաբերությունների առավել ամրապնդման և խորացման համար: Հայաստանը և Իտալիան ունեն պատմական, մշակութային նմանություններ, որոնք նպաստում են տարբեր ոլորտներում համագործակցելուն: Իտալիան առաջին պետություններից էր, որ Հայաստանին օգնություն տրամադրեց Սպիտակի 1988 թ. ավերիչ երկրաշարժից հետո:

Հայաստանը շահագրգռված է Իտալիայի հետ բազմաբնույթ կապերի ու համագործակցության խորացմամբ և կարևորում է քաղաքական երկխոսության, միջխորհրդարանական հարաբերությունների, առևտրատնտեսական, մշակութային և այլ ոլորտներում փոխգործակցությունը:

Իտալիան ճանաչել է Հայաստանի անկախությունը 1992 թ. հունվարի 3-ին, իսկ դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի Հանրապետության և Իտալիայի Հանրապետության միջև հաստատվել են 1992 թ. մարտի 17-ին՝ համապատասխան փաստաթուղթ կնքելով[1]:

Հայ-իտալական քաղաքական հարաբերությունները զարգացել են որոշ ընդմիջումներով, ինչը սկզբնական շրջանում բացատրվում էր Եվրոպական երկրների մտադրությամբ՝ համագործակցություն հաստատելու Հարավկովկասյան տարածաշրջանի երկրների հետ ընդհանրապես, որը խոչընդոտվում էր ԼՂ հարցում հայ-ադրբեջանական հակամարտության առկայությամբ և սպասողական դիրքորոշման պատճառ էր դառնում: Պատահական չէ, որ Բիշքեքում 1994 թ. կնքված հայ-ադրբեջանական զինադադարից հետո միայն եվրոպական երկրները սկզբնավորեցին կամ աշխուժացրեցին հարաբերությունները Հարավկովկասյան երկրների, այդ թվում՝ ՀՀ-ի հետ:

Նույն միտումները դրսևորվում են նաև ՀՀ հարաբերություններում այլ եվրոպական երկրների հետ: Ձերբազատվելով անմիջական ռազմական գործողությունների և պատերազմի սպառնալիքից՝ ՀՀ-ն հետամուտ է լինում երկկողմ քաղաքական հարաբերությունների կառուցման բարդ գործընթացին: 1994 թ. զինադադարից հետո ՀՀ-ն դեռևս լիարժեք չէր ընկալվում որպես առանձին գործընկեր պետություն եվրոպական երկրներիկողմից, ինչը բացատրվում էր երեք հարավկովկասյան պետությունների հետ հավասարաչափ համագործակցելու մտադրությամբ:

Այդ կարծրատիպը կոտրելու նպատակով ՀՀ-ն առաջինը ձեռնարկեց եվրոպական երկրներում դիվանագիտական ներկայացուցչություններ բացելու ծախսատար գործընթացը, թեպետ գտնվում էր բարդ ֆինանսատնտեսական պայմաններում:

---

[1] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 5, գործ 14, էջ 28:

Սկզբնական փուլում հայ համայնքը հաճախակի իր ներդրումն էր ունենում հայկական դեսպանատների համար շենք և գույք ձեռք բերելու հարցում: Իտալիայում ՀՀ դեսպանատունը բացվեց 1995 թ., որը որոշակի չափով կանոնակարգեց երկկողմ հարաբերությունները, և ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների ջանքերն ուղղվեցին հայ-իտալական շփումներու պաշտոնական փոխայցելություններ կազմակերպելու գործին: Հայաստանում Իտալիայի դեսպանատունը բացվեց շատ ավելի ուշ՝ 2000 թ. սեպտեմբերին, որը կապված էր ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի Իտալիա կատարած պաշտոնական այցի արդյունքների հետ:

Քաղաքական համագործակցության զարգացման գործում երկու երկրների դեսպանությունները ունեցան դրական դերակատարում: Սակայն ՀՀ-ի և Իտալիայի միջև երկկողմ հարաբերությունների մակարդակը չէր կարելի բավարար համարել: Այդ ճանապարհին հիմնական խոչընդոտները շարունակում էին մնալ Հարավկովկասյան տարածաշրջանի պառակտվածությունը և հակամարտությունների առկայությունը, ինչը հետածգում էր երկկողմ փոխշահավետ հարաբերությունների ընդլայնումը: Այդ տրամաբանությամբ կարելի է բացատրել իտալացի պաշտոնյաների նվազ հետաքրքրությունը հատկապես մինչ 1997 թ. Հայաստան պաշտոնական այցելություն կատարելու հարցում: Միայն 1997 թ. հոկտեմբերին Հայաստան այցելեց իտալացի դիվանագետ էմանուելե Սկամական, որի արդյունքում ստորագրվեց արձանագրություն Տեխնիկական համագործակցության մասին[1]:

Հայ-իտալական քաղաքական հարաբերությունների աշխուժացման համար խթան հանդիսացավ ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանի /1998 թ. հուլիս/ Իտալիա կատարած այցելությունը, որը առաջին պաշտոնական ուղևորությունն էր Հռոմ Իտալիայի կողմից Հայաստանի անկախության ճանաչումից ի վեր: Այցը կարևոր էր երկկողմ քաղաքական երկխոսությանը նորլիցք հաղորդելու, ինչպես նաև տնտեսական համագործակցության ոլորտում որոշակի հիմքեր ստեղծելու առումով: Արդյունքում ստորագրվեցին «ԱԳՆ-ների միջև խորհրդատվությունների անցկացման» և ՀՀ ու ԻՀ կառավարությունների միջև կապիտալ ներդրումների խրախուսման ու փոխադարձ պաշտպանության մասին համաձայնագրեր[2]:

Ժամանակագրական առումով երկու երկրների նախագահների միջև հերթական բարձրաստիճան հանդիպում տեղի ունեցավ 1999 թ. մարտի 25-ին: Չնայած հանդիպումը հիմնականում իրար ճանաչելու բնույթ էր կրում, քանի որ ՀՀ նախագահի Հռոմ այցելության գլխավոր շարժառիթը Վատիկանում «Հռոմ-Հայաստան» ցուցահանդեսի բացումն էր, որն առիթ հանդիսացավ նաև երկկողմ հարաբերություններին առնչվող հարցերի քննարկման համար:

Իտալիայի արտաքին գործերի փոխնախարար Վալենտինո Մարտելլիի՝ Հայաստան կատարած պաշտոնական այցելության /1999 թ. ապրիլի 10-ին/ նպատակն էր արագացնել Երևանում Իտալիայի դեսպանատան բացումը:

Երկկողմ քաղաքական շփումները ակտիվ էին նաև 2000 թ., ինչը կապված էր մասնավորապես Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Իտալիայի նախագահության հետ: Այցելությունների ընթացքում քննարկվող հարցերի շրջանակը վե-

[1] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 5, գործ 13, էջ 30:
[2] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 1, գործ 173, էջ 103:

րաբերում էր Հայաստանի արտաքին և ներքին քաղաքականությանը, տարածաշրջանային և երկկողմ հարաբերություններին առնչվող խնդիրներին[1]:

Միջխորհրդարանական համագործակցության ոլորտում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին զարգացնելու երկկողմխորհրդարանական հարաբերությունները և ձևավորելու խորհրդարանական բարեկամության խմբեր՝ ՀՀ Աժ նախագահ Արմեն Խաչատրյանի 2000 թ. Իտալիա կատարած պաշտոնական այցելության շրջանակներում:

Պետք է նշել, որ հայ-իտալական հարաբերությունների աշխուժացմանը մեծապես նպաստել է նաև 2001-2002 թթ. Հայաստանի աջակցությունը Իտալիային ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ դառնալու գործում:

Հայաստանի և Իտալիայի արտաքին գործերի նախարարությունների միջև քաղաքական խորհրդատվություններ անցկացնելու նպատակով 2001 թ. ապրիլի 22-24-ը, աշխատանքային այցով Երևանում էր գտնվում Իտալիայի արտաքին գործերի նախարարության Եվրոպայի հարցերով գլխավոր տնօրեն Մաուրիցիո Մորենոն: Այսպիսով, փորձ էր արվում գործնական շփումների նման ձևաչափով նախապատրաստել բարձր մակարդակի հանդիպումներ և քննարկել ընթացիկ հետաքրքրություն ներկայացնող հարցեր: Այցի նկատմամբ մեծ էր հետաքրքրությունը հայկական կողմից, քանի որ բացի ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանից Մորենոյի հետ հանդիպումներ ունեցան նաև այլ գերատեսչությունների ղեկավարները:

Երկկողմ շփումները ակտիվացնելու քաղաքականության շրջանակներում ՀՀ ԱԳ նախարար Վ. Օսկանյանը Իտալիայում 2002 թվականի հունիսի 14-15-ը հանդիպումներ ունեցավ Իտալիայի ԱԳ փոխնախարար Մ. Բոնիվերի և իտալացի գործարարների հետ: Ստորագրվեց ՀՀ և Իտալիայի կառավարությունների միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագիր[2]:

Հայկական կողմի ակտիվությունն ու վճռականությունը հայ-իտալական հարաբերություններում արդյունքներ արձանագրելու ուղղությամբ տվեցին իրենց պտուղները 2002 թ. հուլիսին. Իտալիայի փոխարտգործնախարար Մարգարիտա Բոնիվերի Հայաստան այցելության ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց Երևանում Իտալիայի Հանրապետության դեսպանի նշանակման մասին[3]: Միայն 2003 թ. հունիսի 25-ին Իտալիայի արտակարգ և լիազոր դեսպան Մարկո Կլեմենտեն իր հավատարմագիրը հանձնեց ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանին:

Իտալացի տարբեր պաշտոնյաներ երկկողմ հարաբերությունների զարգացման հենարան էին տեսնում նաև Իտալիայի հայ համայնքը, որի բարեկեցիկ և պարկեշտ կերպարը հարգանք էր ձևավորում Հայաստանի նկատմամբ:

Հայ-իտալական քաղաքական հարաբերությունների բաղկացուցիչ հանդիսացող միջխորհրդարանական կապերը նույնպես հետագա աշխուժացում արձանագրեցին: Աժ նախագահ Արթուր Բաղդասարյանի Իտալիա այցի արդյունքում 2004 թ. ստորագրվեցին:

ՀՀ Ազգային ժողովի և Իտալիայի Տոսկանայի մարզային խորհրդի միջև փոխըմբռնման հուշագիր.

[1] Տե՛ս նույնը, ցուցակ 1, գործ 177, էջ 35:
[2] ՀՀ ԱԳՆ պաշտոնական կայք էջ, www.mfa.am
[3] ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 1, գործ 173, էջ 19:

Համագործակցության համաձայնագիր Իտալիայի Ֆրիուլի-Վենեցիա Ջուլիայի մարզային խորհրդի հետ[1]:

Երկու երկրների տեղական ինքնակառավարման մարմինների միջև փոխգործակցությունը զարգացնելու նպատակով Երևան այցելեց 2005 թ. մայիսին Իտալիայի տարածքային կառավարման նախարար Էնրիկո Լա Լոջան, որիհետ հանդիպումների ժամանակ նույնպես քննարկվեց տարբեր շրջանների միջև կապերի հաստատման հնարավորությունը:

Երկկողմ քաղաքական հարաբերությունների զարգացման առումով 2005 թ. կարևոր տարի էր, քանի որտեղի ունեցավ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պաշտոնական այցը Իտալիա 2005 թ. հունվարի 27-30-ը և հանդիպում Իտալիայի նախագահ Կառլո Ազելիո Չամպիի հետ[2]: Նախագահները Հռոմի հանդիպման ժամանակ քննարկեցին տարածաշրջանային և միջազգային փոխգործակցության հարցեր: «Իտալիա-Հայաստան բարեկամության օրեր»-ի անցկացմանը վերաբերող նախաձեռնությունը արժանացավ Իտալիայի նախագահ Կառլո Ազելիո Չամպիի և Հայաստանի նախագահ Ռոբերտ Քոչարյանի բարձր հովանավորությանը[3]: Ռ. Քոչարյանի կողմից կարևորվում էր նաև Իտալիայի հնարավոր աջակցությունը Հայաստանի եվրաինտեգրման գործին, ինչը բարյացակամ պատասխանի արժանացավ Իտալիայի նախագահի կողմից:

2007 թ. հայ-իտալական դիվանագիտական և քաղաքական քննարկումների հիմնական թեման վերաբերում էր Հայաստան-Իրան երկաթուղագիծ կառուցելու հարցին և իտալական ընկերությունների հնարավոր մասնակցությանը այդ նախագծին: Իտալիայի հետաքրքրությունը վերոհիշյալ նախագծին պայմանավորված էր երկկողմ Իտալիա-Իրան տնտեսական հարաբերությունների պատշաճ մակարդակով. ապրանքաշրջանառությունը երկու երկրների միջև կազմում էր 7 միլիարդ դոլար[4]:

Հայաստանը կարևորում է Իրանի շահավետ ծրագրերի իրականացումը և հետաքրքրված է այդ ձեռնարկներում եվրոպական գործընկեր երկրների ներգրավմամբ: Տարիներ շարունակ Հայաստանի նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի շրջափակման քաղաքականության հետևանքները մեղմելուն էր միտված Իրանի և եվրոպական երկրների միջև տարածաշրջանային ձեռնարկներում Հայաստանի՝ որպես կապող օղակի մասնակցության օղակի հարցը:

Հայաստանի և Իտալիայի միջև երկկողմ հարաբերությունների շրջանակը ընդգրկում է հիմնականում բժշկության, գյուղատնտեսության և աղքատության կրճատման, կրթության և կադրերի վերապատրաստման բնագավառները, որոնք քաղաքական համագործակցության արդյունքներն են:

Հերթական երկկողմ հանդիպումների ժամանակ 2007 թ. սեպտեմբերի 13-ին Իտալիայում ՀՀ դեսպան Ռուբեն Շուգարյանի և Իտալիայի Պատգամավորների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Ումբերտո Ռանիերիի միջև հատուկ քննարկումների առարկա էր ԵՄ-Հայաստան անհատական գործողությունների ծրագրի հարցերը:

[1] Տե՛ս ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 1, գործ 177, էջ 54:
[2] Տե՛ս նույնը, ցուցակ 5, գործ 145, էջ 28:
[3] Տե՛ս նույնը, ցուցակ 13, գործ 32, էջ 12:
[4] Տե՛ս նույնը, էջ 31-32:

Որպես իտալական կողմի բարի կամքի դրսևորում՝ կարելի է դիտարկել ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանին՝ Իտալիա այցելության ժամանակ 2007 թ. դեկտեմբերի 7-10 Կոնելյանո քաղաքում շնորհված հեղինակավոր Civilitas պարգևը[1]:

Ամրապնդելով հայ-իտալական հարաբերություններում գոյություն ունեցող դրական միտումները՝ 2007 թ. հոկտեմբերի 11-ին Հռոմի կենտրոնում տեղադրվել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող և հայ-իտալական բարեկամությունը խորհրդանշող հայկական խաչքար[2]:

Երկկողմ հարաբերություններում հերթական աշխուժացում գրանցվեց /2010 թ. հոկտեմբերի 21/, երբ աշխատանքային այցով Հայաստան ժամանեց Իտալիայի Սենատի ԵՄ քաղաքականության հարցերով հանձնաժողովի պատվիրակությունը՝ տիկին Ռոսանա Բոլդիի գլխավորությամբ: ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հետ հանդիպման ժամանակ քննարկվեցին հայ-իտալական միջխորհրդարանական կապերին առնչվող հարցեր: Ռոսանա Բոլդին կարևորեց նաև ԵՄ «Արևելյան գործընկերության» ծրագրերի ընձեռած հնարավորությունների օգտագործումը Հայաստանի՝ եվրոպային ինտեգրվելու համատեքստում[3]:

2010 թ. Իտալիա այցի շրջանակներում նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպելով Հռոմի պապ Բենեդիկտոս 16-ին և Վատիկանի պետքարտուղար Կարդինալ Տարչիցիո Բերտոնեին՝ պայմանավորվածություն ձեռք բերեց, որ Վատիկանը կբացի իր գաղտնի արխիվը հայ պատմաբանների համար, և որոշ փաստաթղթեր լույս կսփռեն Օսմանյան կայսրությունում հայերի ցեղասպանության խնդրի վրա[4]: Հանդիպումների ընթացքում քննարկվել են Հայաստանի և Վատիկանի հարաբերությունները, ինչպես նաև մտքեր են փոխանակվել Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի և Կաթոլիկ եկեղեցու միջև համագործակցության վերաբերյալ:

Հայաստանը շահագրգռված է Իտալիայի հետ բազմաբնույթ կապերի և համագործակցության պահպանման ու զարգացման հարցում, ինչի մասին հավաստիացնում են հայկական կողմի ներկայացուցիչները յուրաքանչյուր պատեհ առիթին իտալացի գործընկերներիհետ հանդիպումների ժամանակ:

Հայաստան-Իտալիա երկկողմ և բազմակողմ հարաբերությունների զարգացումը բավականին իրատեսական, սակայն մինչ օրս բավարար չօգտագործված հեռանկարներ ունի: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության առաջնահերթություններից է եվրոպական ուղղությունը, որիհենքերից մեկը երկկողմ հարաբերություններն են Իտալիայի Հանրապետության հետ: Հարավային Եվրոպայի երկրների և Հայաստանի Հանրապետության միջև առավել սերտ կապերի հաստատումը, մասնավորապես Իտալիայի պարագայում, պայմանավորված է նաև ազգային ընդհանրությունների և աշխարհաընկալման մոտիկ լինելու հետ, ինչպես նաև այդ երկրում ազդեցիկ հայ համայնքի առկայությամբ, ինչը դյուրին է դարձնում երկկողմ հարաբերությունների հաստատման ու զարգացման գործընթացը:

[1] Տե՛ս նույնը, ցուցակ 13, գործ 32, էջ 44:
[2] Տե՛ս նույնը, էջ 45:
[3] Լրատվական կայք էջ, http://www.lin.am/arm/armenia foreignpolicy 22252.html
[4] Համահայկական լրատվական կայք էջ, www.panarmenian.net

Ашот Карапетян, Основные тенденции политических отношений между Армянской и Италянской Республиками - Отношения между Республикой Армения и Республикой Италия построены на взаимном уважении суверенитета и интересов, которое имеет свои исторические корни и традиции, благодаря чему в различных регионах Италии процветает армянская община.

Двустороннее и многостороннее сотрудничество между Арменией и Италией имеет довольно реальный потенциал и перспективы, который используется не в полной мере. Важность сотрудничества с Италией для Армении состоит в том, что эта европейская страна надежный партнер для Армении в деле интеграции страны в европейские структуры.

Ashot Karapetyan, The main tendencies of political relation between Armenian and Italian Republics - Relations between the Republic of Armenia and Republic of Italy are based on the respect of mutual independence and interests, with its historical background and traditions. The major factor in bilateral relation is the influential Armenian Diaspora in different regions of Italy.

Bilateral and multilateral relations between Armenia and Italy have real potential and perspectives which are not used effectinely. The significance of cooperation with Italy is highly important for Armenia in the frame of European integration and partnership.